Հավելված N 1
N «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-108» ծածկագրով հրավերի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ* | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն** | ժամկետը |
| 1 | 72400000 | Առանձնացված վիրտուալ ցանցի կենտրոնացված հանգույցի ծառայություն 2 | MPLS կամ համարժեք օպտիկամանրաթելային մալուխով, երաշխավորված երկկողմանի սիմետրիկ վիրտուալ L2 տիպի ցանցի կենտրոնացված հանգույց (Տվյալների Հաղորդում) աղյուսակ 1-ում նշված հասցեների միջև (աղյուսակ 1-ը հանդիսանում է սույն տեխնիկական բնութագրի անբաժանելի մասը), հասցեների միջև յուրաքանչյուր կետում ապահովել L2 VPN/ Data vlan առանձնացված Ehernet/RJ45 ելք 5 մբիթ/վ արագությամբ, բացառությամբ գլխամասերում՝ ք.Երևան, Դավիթ Մալյան 37-ում 100 մբիթ/վ, ք. Երևան, Հերացի 12-ում 100 մբիթ/վ, ապահովելով Vlan առանձնացված Ehernet/RJ45 ելք պատվիրատուի վերջնային սարքերի համակցման համար: Աղյուսակ 1-ում բերված հասցեներում :<br>Կատարողը պարտավոր է ՝ աղյուսակ 1-ում նշված յուրաքանչյուր հասցեում անհրաժեշտության դեպքում՝ ապահովի պահուստային միացում, ապահովելով համարժեք արագագործություն, հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում: Սերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծության տրամադրում (յուրաքանչյուր ամիս): Օտագործված ծավալների վերաբերյալ հաշվետվության տրամադրում՝ կապի առկայության, արագության, որակի և մատուցած ծառայության ծավալի վերաբերյալ (ներքին ցանիցում օգտագործված ծավալների վերաբերյալ), առցանց ծրագիր, որը հնրարավորություն կտա պատվիրատուին աղյուսակ 1-ում նշված յուրաքանչյուր հասցեում վերահսկման հնարավորություն՝ առցնանց տեսնել վերը նշված աղյուսակ 1-ի հասցեներում յուրաքանչյուրի արագույունը և օգտագօրծված ծավալները (լոկալ ցանցում և ինտերնետում:<br>Ծառայություն տրամադրողը պետք է պատվիրատուին տրամադրի HelpDesk, որտեղ պատվիրատուն կարող է գրանցել տեխնիկական խնդիրները: HelpDesk-ը պետք է գրանցի խնդրի գրանցնամ ժամանակը, առցանց հնարավոր լինի տեսնել, խնդրով զբաղվում են թե ոչ, ավարտից հետո գրանցի նաև ժամը:<br>Ծառայություն տրամադրողը պարտավոր է պատվիրատուին տրամադրել սերտիֆիկացված մասնագետի կամ մասնգատեների տվյալներ, հեռախոսի համարներ և լինեն հասանելի 7օր 24 ժամ:<br>Ծառայություն տրամադրող կազմակերպությունը պետք է ապահովի ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1069-Ն որոշման պահանջները:<br>Տրամադրվող ծառայությունը չպետք է խափանվի ծառայության մատուցման ընթացքում, յուրաքանչյուր ամսվա մեջ, ոչ ավելի, քան 2 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամանակով:<br>Մեկ ամսվա ընթացքում ծառայությունը չպետք է խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 120 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով ծառայության խափանումների (բացակայությունների) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) հանրագումար: Վիրտուալ ցանցի արագությունը չպետք է շեղվի պահանջված արագությունից ավելի քան 10%-ով:<br>Վերը նշված բոլոր կապի խափանումները կարող են հիմք հանդիսանալ, որպեսզի պատվիրատուն ծառայության համար նախատեսված ամբողջ ամսվա գումարը չվճարի, խնդիրների շարունակական բնույթ կրելու դեպքում նաև պայմանագիրը միակողմանի լուծի: | դրամ | | 1 | Համաձայն Աղյուսակ թիվ 1-ի | Պայմանագրի/համաձայնագրի կնքման պահից մինչև 31.12.2023 թ. |

*Պայմանագրով նախատեսված առավելագույն գումարը:
Չափաբաժնի գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով համաձայն հավելված 2-ի: Չափաբաժնի գինը ձևավորվում է սույն հավելվածի կից թիվ աղյուսյակ 1-ի համապատասխան չափաբաժինների ընդհանուր արժեքի հանրագումարով (10ամսվա համար): Ծառայությունները ամբողջ ծավալով մատուցելու դեպքում փաստացի վճարման գումարը վերահաշվարկվում է տվյալ ամսվա ընթացքում ծառայության փաստացի մատուցման օրերի քանակի համապատասխան:

**Ծառայությունների մատուցման հասցեների ցանկը ներկայացված է աղյուսակ 1-ում: Հնարավոր է առանձին հասցեներով ծառայություններ մատուցման ժամանակահատվածի սահմանափակում լրացուցիչ համաձայնագրի միջոցով: